*1049.* ***ՆՈՐ ՓԻՓԻ****, փայտածածկ եկեղեցու պատին.*

Սուրբ Աստուածածին բարեխօս տէր Ըստեփաննոսին. թվ. :ՌՃԺԹ: (1670):

*Հրատ. Բարխուդարեանց. 298։*

*1050.* ***ՆՈՒՑՆՏԵՂ****, փայտի սյունի վրա՝*

Իշխանութեանն Մելիք Հախնազարի, Պապէր ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն, որդիք Պալլին Սարգիս, հանգուցեալ որդին տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն. թվ. :ՌՃԼԶ: (1687):

*Հրատ. Բարխուդարեանց, 298։*

## 106. ԳԱՐԳՄԱՆԻԿ ԳՑՈՒՂ

*1051. Գյուղի մեջ հիշատակված հայկական հուշարձաններից այժմ գրեթե ոչինչ չի մնացել։ Գյուղից դեպի հարավ եղել է մի մատուռ՝ Սրբլթան անունով, որի մոտ կանգնած է եղել 3½ մետր բարձրությամբ մի մահարձան՝ հետևյալ արձանագրությամբ.*

Այս է տապան սուրբ Սրապիոնի, թոռն մեծին Սամոբին, մեծին Սասին. թվ. :ՉՁ: (1331):

*Հրատ. Բարխուդարեանց, 302։ Լալաեան, V, 312։*

*1052. ԳԱՐԳՄԱՆԻԿ ԳՑՈՒՂԻ հանգում եղել է ավերակ գյուղատեղ՝ Ղարաղ Թափա անունով, ուր եկեղեցու սյուների վրա կա՝*

Ես Խոսրով. թվ. :ՌՃԽԱ: (1692):

*1053.* Ի թվ. :ՌՃԾԵ: (1706):

*Հրատ. Բարխուդարեանց, 302։ Լալաեան, V, 312։*

## 107. ՓԱՌԻՍՈՍ ՔԱՂԱՔԱՏԵՂ (ՇԱԼԱՔԵՆԴ) ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

*Ա.* Փառիս քաղաքատեղ. *գտնվում է Շամքոր գետի վերին հոսանքում, նրա երկու ափերին։ Այժմ մնացել են տնատեղերի հետքերը միայն։ Ավերակների, նույնպես և հուշարձանների բոլոր քարերը տարվել են շրջակա գյուղերի բնակիչների կողմից։ Դեռևս XIX դարի վերջերին, ըստ Մ. Բարխուդարյանցի նկարագրության, ավերակների մեջ նկատելի էին տասն և մեկ եկեղեցիների ավերակները և երկու կամուրջները։ Մեծ եկեղեցին ունեցել է 15 մ. երկարություն և 11½ մ. լայնություն։ Ավերակների սահմաններում հեղինակը՝ միայն երկու արձանագրված խաչքարեր է տեսել (մեր № 1054, 1055 արձանագրությունները)։ Դրանք տեղաշարժվել և գրվել են երկաթուղու գծի տակ։*

*Քաղաքատեղիի հյուսիսային եզրին գտնվող մի բարձր լեռնաբազուկի արևելյան ծայրին բավական լավ պահպանված մնում է Փառիսոսի բերդը՝ բազմաթիվ կիսակլոր աշտարակներով։ Պարիսպների հաստությունը 2½ մետր է. ներսում կան բազմաթիվ շենքերի ավերակներ, մատուռի ու ջրամբարի մնացորդներ։*

*Բ.* Փառիսոսի վանք. *գտնվելիս է եղել քաղաքից ոչ հեռու, Տանձուտ մեծ գյուղի ավերակներից փոքր-ինչ վեր՝ մի անտառապատ սարահարթի վրա։ Բաղկացած է եղել երկու եկեղեցիներից և մեկ մատուռից ու ղավիթներից։ Նկարագրողներն այստեղ միայն մեկ արձանագրություն են նկատել (մեր № 1056)։ Այս հուշարձանը մենք տեսնել չկարողացանք։*

*Գ.* Ս. Հովհաննես եկեղեցի. *գտնվում է քաղաքատեղիից 4—5 կմ դեպի արևելք՝ բարձր և անտառապատ լեռների վրա։ Մի փոքր և կիսավեր շենք է. պատերի ստորին մա-*

սերն ավելի հին են և որբատաշ քարերով, վերին մասերը շինված են ճեղքված քարերով։ Պատերի մեջ օգտագործվել են հին խաչքարեր։ Հարավային պատի արևմտյան անկյունի մոտ կանգնած մի հին և պարզ խաչքարի վրա կա մի թերի արձանագրություն (№ 1057)։

Եկեղեցուց քիչ հեռու, կիսավեր վիճակում երևում են մատուռ-դամբարանի ավերակները։

**1054. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ, որը դրված է եղել երկաթղծի տակ.**

Թվին ։ՉԻ։ (1271). յանուն Այ. Ես Հայրապետ · · · ւա · · · եղբայր իմ · · կանգնեցաք զխաչս յիշատակ հաւր մերոյ Խորենայ, մաւր մերոյ Շաղակկոյ ու եղբաւր մերոյ Խայոմբեկեայ։ Ով զայս գիրս կարդայ · · · · · ։

Հրատ. Բարխուդարեանց, 307։

**1055. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ, որը դրված է եղել երկաթգծի տակ, Նախըրդի մոտ.**

Թվ. ՋԼ։ (1481). յանուն Այ. Ես Սաանայս կանգնեցի զխաչս ի տէրութեան ժամանակի իմոյ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամուսնոյն իմոյ Սիրունկայ և որդւոյ իմ Սարգիսայ և դստերն իմոյ Մամախաթունայ, Նփաղիանեայ, եղբաւրն Սիրունիկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց։ Ով կարդայ սայս Դաւիթս յիշեսցէ առ Աստուած. ջրհեց · · · · ·

Հրատ. Բարխուդարեանց, 307։

**1056. ՓԱՌԻՍՈՍԻ ՎԱՆՔԻ մատուռի մուտքին որպես բարավոր օգտագործած խաչքարի թևերի շուրջը.**

։ՆԽԳ։ (994) Մուսէս երէց

Ծանոթ. Առնում ենք Լալայանից. Բարխուդարյանցը թվականը չունի։

Հրատ. Բարխուդարեանց, 306։ Լալաեան, V, 340։

**1057. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ հարավային պատի տակ կանգնած խաչքարի վրա տող.**

ԻԹՎՀՖԵ Ե ՍՎԱ · · ·

Ի ԹՎԻՆ ։ՇԾԵ։ (1106). ԵՍ ՎԱՐԴԱՆ · · · · · · ։

Հրատ. Բարխուդարեանց, 308։
Լուսանկ. 136.

**1058. ՆՈՒՅՆՏԵՂ, այլ խաչքարի վրա.**

Թվին ։ՋԻ։ (1471)։

Հրատ. Բարխուդարեանց, 308։

## 108. ՓՈՔՐ ՈՒ ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ ԳՅՈՒՂԵՐ ԵՎ ԽԱՄՇԻ ՎԱՆՔ

Այս բնակավայրերը գտնվում են Սևանի ավազանից դեպի Կուր գետի հովիտը տանող հին ճանապարհի վրա։ Այդ ճանապարհին կան մի քանի ավերակ գյուղատեղեր, իսկ եզրերին հաստատուն պատվանդաններին վրա դեռևս կանգուն են մեծ խաչքարեր՝ սահմանախաչեր կամ ճանապարհի խաչեր։ Դրանցից մեկը կանգնած է սրանոցի երեք իրար վրա դրված քարերից կազմված պատվանդանին, գտնվում է Բաշքենդ գյուղից երկու կիլոմետր դեպի ցած։